

## Ձ.Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

### ՄԵՂՄԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵՉՎՈՒՄ

Քննարկվում են անգլերենի մեղմասությունները, խոսքում դրանց կիրառման անհրաժեշտությունն ու կարևորությունը, ինչպես նաև մարդկային գործունեության այն բնագավառները, որտեղ պարտադիր է գործադրել մեղմասությունները՝ խոսքը վայելույ, մեղմ, ոչ կտրուկ դարձնելու նպատակով:

**Առանցքային բառեր.** մեղմասութուն, ոչ վայելույ արտահայտություն, բարեկիրթ, բնագավառ:

**Ներածություն:** Լեզվի պատկերավորման միջոցները մշտապես եղել են գիտական ուսումնասիրությունների առարկա: Դեռևս հնագույն ժամանակներից ուշադրության կենտրոնում են եղել խոսքի տարաբնույթ դրսևորումները, դրանց զատորոշիչ առանձնահատկությունները, ինչպես նաև պատկերավոր և արտահայտիչ խոսքի ինչ-ինչ միջոցները: Այնուամենայնիվ, խոսքի պատկերավորման արտահայտչական որոշ միջոցներ դուրս են մնացել գիտական հետաքրքրության դաշտից: Մեղմասությունը խոսքի այդ արժանիքներից մեկն է, որն առանձնապես ուսումնասիրված չէ:

Մեղմասություն տերմինը ծագել է հունարեն *euphemi* բառից (*eu*-հոյակապ, *phemi* –խոսում եմ): Մեղմասությունը լայն իմաստով տհաճ, կոպիտ, կտրուկ բառերի ու արտահայտությունների փոխարինումն է վայելույ, ավելի բարեկիրթ, մեղմացված համանշային տարբերակներով, որոնք նվազեցնում են ոչ վայելույ կամ բացասական հասկացությունները: Հայ լեզվաբանության մեջ Էդվարդ Աղայանը մեղմասության կամ էվֆեմիզմի մի տեսակ է համարում նաև տաբուն, երբ «զանազան նախապաշարումների, սնոտիապաշտությունների ու կրոնական հավատալիքների շնորհիվ խուսափում են որոշ առարկաների անունները տալուց և նրանց մասին խոսելիս զանազան արտահայտություններ գործածում»[1]:

Մեր օրերում, երբ խոսքային հաղորդակցումը գործնական կարևոր նշանակություն է ձեռք բերում, մեղմասության ձևերին տիրապետելը նախապայման կարող է դառնալ հաղորդակցման արդյունավետությունն ապահովելու համար: Օրինակ՝ անգլերենում ալկոհոլը, թմրանյութը, մոլեխաղը այն հասկացություններն են, որոնք պետք է ներկայացնել մեղմասված տարբերակով: Համաձայն Հոլդերի՝ նմանատիպ կախվածությունները կարելի է կոչել *weakness/թուլություն/-weakness for the drink-alcoholism*, իսկ հարթած մարդուն բնորոշել որպես *legless*,

racked, overtired, in the bag, illuminated, under the influence. Թմրանյութը /marijuana/ մեղմասվում է որպես weed, pot, green grass, happy dust, substance, powder. Թմրանյութի որոշակի տեսակի գունային առանձնահատկություններից ելնելով՝ /կոկայինի և հերոինի սպիտակ գույնը/ դրանց անվանվում են sugar. Հոլդերը այս կապակցությամբ գործադրում է նաև white և snow բառերը, օրինակ՝ white powder, white stuff, snowed in [2]. Մեղմասությունը գործածվում է նաև երևույթի բուն էությունը քողարկելու նպատակով: Այն օգնում է խուսափելու անհարկի որոշակիությունից, ուղղակի պատասխանից՝ իրերը իրենց անունով չկոչելու, տեղեկույթը թուլացնելու միջոցով: Այս դեպքում խոսքը հնչում է որպես ակնարկություն, օրինակ, you know where to go փոխարեն go to hell, hell with you, I need to go փոխարեն go to the lavatory և այլն: Համաձայն Լ.Պ. Կրիսինի՝ մեղմասություններն առավել հաճախ հանդիմանում են մարդկային գործունեության անձնական և սոցիալական ոլորտներում: Անձին առնչվող մեղմասություններն առավել նպատակահարմար է թվում գործածել՝ հաղորդակցման նորմալ պայմաններ ապահովելու համար, մինչդեռ սոցիալական ոլորտում մեղմասությունները գործադրվում են խոսքը վայելուչ, մեղմ, ոչ կտրուկ դարձնելու նպատակով [3]: Անգլերեն մասնագիտական գրականության մեջ մեղմասությունները դասակարգվում են ըստ կյանքի տարբեր բնագավառների ու ոլորտների: Առավել տարածված են մարդու արտաքին թերությունները «քողարկող» մեղմասությունները: Ընդ որում՝ նման մեղմասությունները առավելապես վերաբերում են կանանց, քանզի ընդունված իրողություն է, որ կանայք առավել շատ են արժևորում արտաքին տեսքն ու գեղեցիկ երևալու ցանկությունը: Առհասարակ կանանց վերաբերող մեղմասությունները կարելի է բաժանել մի քանի թեմատիկ խմբերի:

1. *Մեղմասություններ, որոնք արտահայտում են փարաբնույթ որակական հատկանիշներ:* Այս խմբում ներառված են կանանց ընտանեկան կարգավիճակը, վարքն ու բարքը նկարագրող մեղմասություններ: Օրինակ՝ ‘no better than she should be’ կամ ‘not all she should be’ մեղմասությունները գործադրվում են թեթև վարքի տեր կանանց բնութագրելու համար: Այս խմբում ներառված շատ մեղմասություններ արտահայտում են նաև այս կամ այն երևույթի վերաբերյալ հեզանք, քամահրանք: Օրինակ՝ on the shelf մեղմասությունը գործադրվում է չամուսնացած և այլևս ամուսնության չհավակնող կանանց վերաբերյալ, fishing fleet-ամուսնական տարիքի աղջիկ, ով մեկնել է արտասահման փեսացուի փնտրտուքներով:

2. Արտաքին տեսքի թերությունները քողարկող մեղմասություններ: Օրինակ՝ ավելորդ քաշի և գիրության հետ կապված խնդիրները նպաստել են մի շարք մեղմասությունների առաջացմանը: Անգլերեն fat, obese, gross, overweight ածականները փոխարինվել են above average, filled out, pleasantly plump, big gal, mature figure, plus-size, husky, Renoir woman, of classic proportions, queen size մեղմասություններով:

3. Մարմնի մասերի ֆիզիոլոգիական գործընթացները մարմանը մեղմասություններ: Օրինակ՝ wetness/քրտինք/ bedewed/քրտնած/ բառերը նախընտրելի է գործադրել կանանց մոտ քրտնարտադրություն առաջանալու ժամանակ, ‘... a lady might get bedewed but she didn’t sweat’: Կնոջը, ով երեխայի է սպասում, նախընտրելի է բնութագրել big, anticipating, expecting, eating for two, with child, knocked up, in the family way, bun in the oven բառերով և արտահայտություններով [2]:

Ի տարբերություն կանանց վերաբերող մեղմասություններին՝ անգլերենում տղամարդկանց առնչվող մեղմասությունները կապված են անհավատարմության, ցոփ ու շվայտ կյանք վարելու հետ: Օրինակ՝ to play the goat կամ to billy-goat about-անառակ կյանք վարել, to have a dame complex-չափազանց շատ տարված լինել կանանցով, a man of affairs, big-time operator, bachelor of hearts-կնամուղ:

Շատ են նաև կին և տղամարդ հարաբերություններում տարիքային անհամապատասխանությունը ցույց տվող մեղմասությունները, օրինակ՝ baby-stealer, baby-snatcher, baby-farmer, sweet papa, big game, gold mine, pay-papa/տղամարդ, ով սիրային կապի մեջ է երիտասարդ աղջկա հետ/: Հակադիր երևույթը ևս օրինաչափ է, երբ այս կամ այն մեղմասությունով մատնանշվում է երիտասարդ տղայի և հասուն կնոջ միջև սիրային կապը: Օրինակ՝ toy-boy, easy-rider, good-time Charley, honey man, lucky boy և այլն:

Տարիքը: Անգլերենում տարիքը ևս դիտարկվում է այն երևույթը, որն անպայմանորեն անհրաժեշտ է մեղմասել: Հասուն տարիքի հասած անձնավորությանը/40-ից 65 տարեկան/ չվիրավորելու նպատակով գործադրվում է middlescence գոյականը adolescence բառի նմանությամբ: Առաջավոր տարիքը՝ 65 տարեկանից սկսած, կոչվում է the third age. Պաշտոնական ցուցանակներում, հայտարարություններում, հասարակական տրանսպորտում և վայրերում an old man, elderly people արտահայտությունների փոխարեն կիրառվում է senior citizen լեզվական միավորը: Առօրյա, ժողովրդախոսակցական լեզվում գործադրվում է golden age մեղմասությունը [4]:

Մեղմասությունների գործածությունը մեծ չափով պայմանավորված է սոցիալական միջավայրով, խոսքի բովանդակությամբ և հաղորդակցվող կողմերի փոխհարաբերությամբ: Կան մեղմասություններ, որոնք առավել բնորոշ են սոցիալական այս կամ այն միջավայրին, մասնագիտությանը կամ հանրության այս կամ այն շերտին: Մասնագիտական յուրաքանչյուր բնագավառ, հասարակական կյանքի ոլորտ ունի քողարկող մեղմասություններ, որոնք խոսքին առանձնահատուկ նրբերանգներ են հաղորդում: Անգլերենում կարելի է առանձնացնել հետևյալ ոլորտները՝ տնտեսություն, ռազմական բնագավառ, հանցանք, կրթություն, բժշկություն [2]:

*Տնտեսության բնագավառում* դրանք գործածվում են, օրինակ, երբ խոսքը գնաճի, տնտեսական անհաջողությունների, անցանկալի այլ իրողությունների մասին է: Օրինակ՝ economic crisis/տնտեսական ճգնաժամ/- period of economic adjustment/տնտեսական կայունացման ժամանակահատված/, period of negative economic growth/բացասական տնտեսական աճի ժամանակահատված/: Կապիտալիզմ կոչվող տնտեսական համակարգը մեղմասվում է հետևյալ լեզվական միավորներով՝ the system of free enterprising/ազատ շուկայական համակարգ/, open society/բաց հասարակություն/, economic humanism/տնտեսական հումանիզմ/: Անգլերենում հաճախադեպ հանդիպող մեղմասությունների շարքն են դասվում աշխատանքից ազատմանն առնչվող բառերն ու արտահայտությունները: Օրինակ՝ firing բառի բացասական ազդեցությունը մեղմելու համար գործածվում են downsizing, rightsizing, redundancy elimination, workforce reduction, layoff, job cut, reduction in force բառային միավորները: Not all the threatened layoffs will be carried out[5].

*Ռազմական բնագավառում*, օրինակ, երբ խոսքը սեփական գործողությունների մասին է, ընդունված չէ դրանք որակել որպես բնագավառում կամ ագրեսիա/aggression/ և պատերազմ/war/: Այս բառերը փոխարինվում են ներգրավվածություն/involvement/, հակամարտություն/conflict/ եզրույթներով, իսկ զինված հակամարտության ոչնչացումը՝ pacification/հանդարտեցում, խաղաղեցում/, bomb/ռումբ/-device/սարք/, bombing/նմբակոծում/-limited air strike/ սահմանափակ օդային հարված/ կամ air support/օդային օժանդակություն/, strategic hamlet/ռազմավարական համայնք/-concentration camp/համակենտրոնացման ճամբար/: Ռազմական գործողությունների արդյունքում զոհվածներին անվանում են body-count, inoperative combat personnel.

*Հանցանք:* Ըստ էության, հանցանքին վերաբերող մեղմասությունները բազմաթիվ են՝ հաշվի առնելով երևույթի բացասական լինելն ու դրան առնչվող բառամթերքը մեղմացնելու անհրաժեշտությունը: Օրինակ՝ prison/բանտ/-correctional facilities/ուղղիչ հաստատություն/, prison guard- correctional officer կամ custodial officer. Բանտարկյալներին անվանում են clients of correctional system/ուղղիչ հաստատությունների հաճախորդներ/ կամ people enjoying temporal hospitality from the state/մարդիկ, ովքեր վայելում են ժամանակավոր հյուրընկալություն պետության կողմից/:

*Կրթության բնագավառում* ևս հանդիպում են մի շարք մեղմասություններ: Այստեղ շրջանառվող մեղմասություններն առավելապես վերաբերում են սովորողների մտավոր կարողություններին, ուսման գործընթացում ցուցաբերած առաջադիմությանը և այլն: Օրինակ՝ ցածր առաջադիմությամբ սովորողներին անվանում են underachievers, stupid- academically challenged, իսկ ներառական կրթություն ստացողներին՝ mentally charged, mentally challenged, special, disable փոխարեն retarded, slow, backward/հետամնաց/ [5]: Ֆիզիկական հաշմանդամությանը վերաբերող cripple, invalid, handicap լեզվական միավորները պատշաճորեն փոխարինվում են differently abled, learners with disabilities, students with special needs արտահայտություններով:

*Բժշկության բնագավառում* շատ հաճախ կարելի է հանդիպել այս կամ այն հիվանդության մեղմասված տարբերակներին: Օրինակ՝ սրտի հետ կապված խնդիրները մեղմասվում են cardiac incident, cardiac arrest, heart problem. Cancer/քաղցկեղ/ հիվանդությունը life threatening disease, the big C, the crab, syphilis-French ache, French disease. Բժշկական խոսքի տերմինային հագեցվածությունն ևս թույլ է տալիս խուսափել ոչ պատշաճ, անցանկալի բառամթերքի գործադրումից/coronary inefficiency/: Նման մեղմասությունները նվազեցնում են անցանկալի ելքի, վատ տեղեկության տպավորությունը, մեղմում են լսարանի վրա հնարավոր ծանր ազդեցությունը: Պատահական չէ, որ մահվան ու թաղումի հետ կապված գործողությունները լեզվական տեսակետից իրացվում են գրեթե բացառապես մեղմասությունների միջոցով: Օրինակ՝ մահվան հետ կապված՝ pass away, pass into the next world, leave the land of living, go to heaven, go to a better place, go west, sleep away, return to ashes.

Կա նաև մեղմասության հակառակ երևույթը, երբ համեմատաբար կիրթ, մեղմ խոսքի փոխարեն գործածվում է ավելի խիստ արտահայտություն՝ կոպտաբանություն/dysphemism/: Օրինակ՝ pregnant-in pup, in calf, in pig, a church-

ring-ding God box, a TV set- an idiot box, a good looking woman- a meat wagon, parents-wrinklies, a nose-a hooter, to give birth-to burst, stubborn-pigheaded, an environmentalist- a tree-hugger.

Անշուշտ, հայոց լեզուն ևս հարուստ է մեղմասություններով, և անգլերենի վերոնշյալ լեզվական միավորները ունեն հայերեն համարժեքները, սակայն դրանց օգտագործման ոլորտի ընդհանրություններն ու զատորոշիչ առանձնահատկությունների վերհանումը մեկ այլ ուսումնասիրության առարկա է, որն, անկասկած, կիրականացվի հետագա աշխատանքների ընթացքում:

Այսպիսով, մեղմասությունը խոսքի արտահայտչականությունն ապահովող բառային-շարահյուսական կարևոր միջոց է, որը նշանակալի դերակատարություն ունի լեզվի գործառնման տարբեր ոլորտներում՝ հաղորդակցումն առավել բարեկիրթ, վայելուչ, տեղին դարձնելու առումով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղայան է. Բ.** Լեզվաբանության ներածություն, Եր., 1967, էջ 300:
2. **Holder R. W.** How Not To Say What You Mean. A Dictionary of Euphemisms, Oxford University Press, 2013, 115p.
3. **Крысин Л.П.** Эвфемизмы в современной русской речи - М., 2008.- С.41-79.
4. **Spears R. A.** Slang and euphemism. - Signet, 2014.- P.167-195.
5. Oxford Dictionaries Online <http://www.oxforddictionaries.com/>

#### Յ.Լ. ԲԱՐՍԵԳՅԱՆ

#### ЭВФЕМИЗМЫ В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

Рассматриваются эвфемизмы английского языка. Показана необходимость и важность их использования в речи, а также в тех областях человеческой деятельности, где с помощью эвфемизмов речь становится мягкой, вежливой и не резкой.

*Ключевые слова:* эвфемизмы, неприличное выражение, культурный, область.

#### Z.L. BARSEGHYAN

#### EUPHEMISMS IN THE ENGLISH LANGUAGE

The article discusses English euphemisms, the necessity and importance of their usage in speech as well as in those human activities where it is obligatory to apply euphemisms for making the utterance decent, mild and not harsh.

*Keywords:* euphemisms, indecent expression, courteous, sphere.